

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14.11 /114084/ -12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-ԻՆ
ԺԱՄԸ 17:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ <<ՆՈՐԱՎԱՆՔ>> ԳԿՀ-Ի ՀՈԳԵԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Հ. Հակոբյան	ՀՀ սփյուռքի նախարար
Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Մ. Լալայան	ՀՀԿ-ի փոխնախագահ
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Գ. Գազյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Բ. Վարդանյան	ՀՀ պաշտպանության նախարարի գլխավոր խորհրդական, <<Հայք հաստատություն>> ՀԿ-ի տնօրեն
Գ. Հարությունյան	<<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն
Ս. Սարուխանյան	<<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրենի տեղակալ

1. <<Նորավանք>> ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի կանոնադրության և կազմի քննարկման մասին

(Գ. Հարությունյան, Ա. Միրզախանյան, Տ. Մարգարյան)

1. <<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանը նշեց, որ <<Նորավանք>> ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի կանոնադրությունը հաստատվել է <<Հիմնադրամների մասին>> ՀՀ օրենքի հաստատումից առաջ, այդ իսկ պատճառով կանոնադրության մեջ առկա են որոշ անհամապատասխանություններ և նպատակահարմար համարեց կատարել հետևյալ փոփոխությունները`

1) <<Նորավանք>> ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի նիստ ձևավորել տարին մեկ կամ երկու անգամ.

2) աուդիտն իրականացնել համաձայն գնումների մասին նոր օրենսդրության և ընթացակարգերի համաձայն:

Հարց բարձրացրեց նաև խորհրդի կազմը վերանայելու վերաբերյալ, քանի որ որոշ անդամներ չեն մասնակցում խորհրդի նիստերին: Միաժամանակ նպատակահարմար համարեց լրացնել կազմը և ներկայացրեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի թեկնածությունը:

2. ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանը լրացրեց, որ անհրաժեշտ է վերանայել նաև կանոնադրության հետևյալ մասերը`

1) <<Ընդհանուր դրույթներ>> Գլխի 2-րդ, 3-րդ, 6-րդ մասերը.

2) <<Հիմնադրամի կառավարման մարմինները>> Գլխի 28-րդ, 30-րդ, 35-րդ մասերը.

3) <<Հիմնադրամի գործունեության վերահսկողությունը>> գլուխն ամբողջությամբ պետք է համապատասխանեցվի օրենսդրական նոր պահանջներին:

3. Քննարկումներից հետո որոշվեց` հանձնարարել<<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանին`

1) մեկ անգամ ևս ճշտել <<Նորավանք>> ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամներ` ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Մանուկ Թոփուզյանի և

Կարինե Կիրակոսյանի խորհրդի կազմում հետագա անդամության նպատակահարմարության հարցը և առաջիկա խորհրդի նիստին ներկայացնել տեղեկատվություն խորհրդի անդամներին.

2) <<Նորավանք>> ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի կանոնադրությունը խմբագրել և համապատասխանեցնել գործող օրենսդրությանը.

3) <<Նորավանք>> ԳԿՀ-ի հոգաբարձուների խորհրդի կազմում ներառել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին:

2. Հաշվի առնելով «Նորավանք» ԳԿՀ-ի 2011 թվականի գործունեության արդյունքների աուդիտի եզրակացությունը՝ «Նորավանք» ԳԿՀ-ի 2011 թվականի գործունեության արդյունքների հաշվետվության հաստատման մասին

(Գ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

1. <<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանը տեղեկացրեց, որ աուդիտն իրականացրել է մանրակրկիտ հետազոտություն և ըստ վերջինիս կողմից ներկայացված եզրակացությունը հրապարակել են մամուլում, ներկայացրել են ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարություն, տեղադրել են <<Նորավանք>> ԳԿՀ-ի կայքում: Ներկայացրեց նաև աուդիտի նամակը՝ ուղղված հոգաբարձուների խորհրդին:

2. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ծանոթանալով աուդիտի կողմից հոգաբարձուների խորհրդին ներկայացված նամակին, նշեց վերջինիս կողմից բարձրացված հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները՝

1) հետևել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին ու պահանջներին.

2) ֆինանսական հաշվետվությունները կազմելիս և ներկայացնելիս խստորեն պահպանել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներն ու պահանջները՝

ա. առանձին դեպքերում դրամարկղի էլքի օրդերներում առկա չեն գանձապահի ստորագրությունը և տառերով գրված չեն գումարների չափերը.

բ. դրամարկղի մուտքի օրդերներում բացակայում է վճարողի նշումը և ստորագրությունը,

գ. որպես ձևաթուղթ առաջակում են գործածել համակարգչային ծրագրի ձևաթուղթը և առհասարակ նպատակահարմար են համարում գործածել համակարգչային ծրագրի ձևաթղթերը.

3) հաշվապահությունը վարվել է համակարգչային ծրագրով, սակայն անալիտիկ և սինթետիկ հաշվառման որակը ցածր է և նպատակահարմար են համարում ուշադրություն դարձնել հաշվապահական հաշվառման որակին և թղթակցություններին:

3. Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանին՝ շուտափույթ լուծում տալ աուդիտի կողմից բացահայտված թերացումներին.

2) հաստատել «Նորավանք» ԳԿՀ-ի 2011 թվականի գործունեության արդյունքների վերաբերյալ աուդիտի եզրակացությունը:

3. «Նորավանք» ԳԿՀ-ի «Ուսումնական կենտրոն»-ի 2012 թվականի ծրագրերի քննարկում, այդ կենտրոնի հաստիքների հնարավոր ավելացման և դրա հետ կապված հնարավոր նոր հաստիքացուցակի հաստատման մասին

(Գ. Հարությունյան, Ն. Հակոբյան, Ա. Աշոտյան, Ա. Միրզախանյան,
Տ. Սարգսյան)

1. «Նորավանք» ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանը տեղեկացրեց, որ 2012 թվականի 1-ին եռամսյակում ՀՀ ԳԱԱ-ի գիտակրթական միջազգային կենտրոնի (ԳԿՄԿ) հետ ձեռք են բերել համագործակցելու նախնական պայմանավորվածություն, համաձայն որի 2012-2013թթ. ուսումնական տարում ԳԿՄԿ-ի մագիստրատուրայի ուսանողների համար «Նորավանք» ԳԿՀ-ում կանցկացվեն հատուկ կուրսեր (դասընթացը կարող է վարվել 32 դասաժամի շրջանակներում) հետևյալ թեմաներով՝

1) «Տեղեկատվական անվտանգություն», որը կվարեն «Նորավանք» ԳԿՀ-ի տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետները՝ Գագիկ Հարությունյանը (տնօրեն, Տեղեկատվական կենտրոնի ղեկավար), Աննա Ժամակոչյանը (տեղեկատվական կենտրոնի ղեկավարի տեղակալ, ավագ փորձագետ), Մոնա Մանուսյանը (տեղեկատվական

կենտրոնի ղեկավարի տեղակալ), ավագ փորձագետ Մամվել Մարտիրոսյանը (տեղեկատվական կենտրոնի փորձագետ): Այս դասընթացը կներառի հետևյալ բաժինները՝ նվիրված՝

ա. տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներին, հայեցակարգերին,
բ. սոցիոմշակութային անվտանգությանը՝ տեղեկատվական համատեքստում,
գ. տեղեկատվական անվտանգության ոլորտում վիրտուալ սոցիալական ցանցերին,
դ. հակահայկական տեղեկատվական քաղաքականությանը և դրա դեմ ՀՀ պաշտպանական գործողություններին.

2) «Միջազգային և տարածաշրջանային էներգետիկ անվտանգություն», որը կվարեն «Նորավանք» ԳԿՀ-ի քաղաքական հետազոտությունների և ուսումնական կենտրոնի փորձագետները՝ Սևակ Մարտիրոսյանը (քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար), Արա Մարջանյանը (քաղաքական հետազոտությունների կենտրոնի ավագ փորձագետ), Տիգրան Հարությունյանը (ուսումնական կենտրոնի ղեկավար): Այս դասընթացը կներառի հետևյալ բաժինները՝ նվիրված՝

ա. էներգետիկ անվտանգություն եզրին և դրա նշանակությանը,
բ. էներգետիկ անվտանգությանը՝ որպես քաղաքագիտական կատեգորիայի,
գ. միջազգային նավթային և գազային շուկային,
դ. միջուկային և վերականգնվող էներգետիկային,
ե. էներգետիկ անվտանգությանը Հարավային Կովկասում,
զ. էներգետիկ պատերազմներին, էներգետիկային և միջազգային հարաբերություններին,

է. Հայաստանում միջուկային էներգետիկային. պատմությանը, քաղաքականությանը, տնտեսությանը,

ը. Հայաստանում միջուկային էներգետիկայի զարգացման գիտական հիմքերին:

Տեղեկացրեց նաև, որ ցանկություն ունեն կազմակերպելու առցանց սեմինարների շարք, որն իրականացնելու նպատակով պատրաստվում են հրավիրել հետևյալ բարձրակարգ մասնագետներին՝

1) Միխայիլ Դելյագին՝ Գլոբալիզացիայի պրոբլեմների ինստիտուտի տնօրեն (ИИПРОГ) («Գլոբալ տնտեսական ճգնաժամ»).

2) Սերգեյ Գրինյան՝ Ռազմավարական գնահատման և կանխատեսումների կենտրոնի գլխավոր տնօրեն («Տեղեկատվական անվտանգության ժամանակակից մոտեցումները»).

3) Գեորգի Դերլուցյան՝ Չիկագոյի Հյուսիս-արևմտյան համալսարանի պրոֆեսոր («Արդի սոցիոլոգիայական միտումները»).

4) Եվգենի Սատանովսկի՝ Մերձավոր Արևելքի ինստիտուտի նախագահ («Քաղաքական գործընթացները Մերձավոր Արևելքում»).

5) Մարատ Տերտերով՝ Եվրոպական աշխարհաքաղաքական ֆորումի տնօրեն, Բրյուսել («Արաբական գարնան հետևանքները»).

6) Սերգեյ Պերեսլեզին՝ սոցիոլոգ, ռազմական պատմաբան («Եվրամիության և Թուրքիայի հնարավոր կոնֆլիկտը»).

7) Սիմոն Սարաջյան՝ Հարվարդի համալսարանի Բեյքերի կենտրոնի ավագ փորձագետ («Չինաստանի աշխարհաքաղաքականությունը և Հայաստանը»).

8) Միհրան Դաբալ՝ Սփյուռքի և ցեղասպանության հետազոտությունների ինստիտուտի տնօրեն (Բոխում, Գերմանիա), («Սփյուռքի վերաբերյալ արդի պատկերացումները»):

Հավելեց նաև, որ այս ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ՝ փորձագետներին վարձատրելու և տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար: Տեղեկացրեց նաև, որ Ամադու գյուղի տարածքում գտնվող <<Նորավանք>> ԳԿՀ-ին պատկանող շենքի արտաքին վերանորոգման աշխատանքներն ավարտել են: Մնացել են ներքին հարդարման աշխատանքները և կահավորումը:

<<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանն անդրադառնալով ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի կողմից բարձրացված ԱԷԿ-ի նոր բլոկի և ջերմային էներգետիկայի հարաբերակցության վերաբերյալ վերլուծական եզրակացություն ներկայացնելուն նշեց, որ ունեն համապատասխան մասնագետներ այդ վերլուծությունն իրականացնելու համար:

2. ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանը նշեց, որ <<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանի կողմից ներկայացված ծրագիրը բավականին հաջող է և հնարավոր է իրականացնել առանց մեծ ծախսերի, և կարևորեց նաև այն հանգամանքը, որ բարձրակարգ մասնագետները հնարավորություն կունենան մեր երիտասարդության

համար դասախոսություններ կարդալ: Մարքավորումներին անդրադառնալով նշեց, որ դրանք ձեռք բերելու համար մեծ ծախսեր չեն առաջանա, ինչպես նաև նախնական շրջանում հնարավոր համարեց ՀՀ սփյուռքի նախարարության տեխնիկական միջոցներից օգտվելը:

Տեղեկացրեց նաև, որ հայագիտության համաժողովը հետաձգել են և այն կկայանա աշնանը: Նպատակահարմար համարեց այդ միջոցառմանը մասնակից դարձնել նաև <<Նորավանք>> ԳԿՀ-ին, քանի որ այն աշխարհի տարբեր երկրներում գործունեություն ծավալող հայ վերլուծաբանների և քաղաքագետների հավաք է, որը կնպաստի Հայաստանի հասարակական, քաղաքական, հետազոտական և կրթական գործընթացներին նրանց ինտերգրմանը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը նպատակահարմար համարեց առցանց սեմինարներն իրականացնել աբոնեմենտային սկզբունքով՝ սահմանելով դրա գինը, ինչպես նաև կցել համապատասխան ծրագիր, որը հնարավորություն կընձեռի հումանիտար բուհերին առաջարկել աբոնեմենտների ձեռք բերման միջոցով իրենց ուսանողական-դասախոսական կազմին տրամադրել համապատասխան կրթական ծառայությունները:

4. ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանն առաջարկեց գիտական սեմինարների շարքն իրականացնել նաև հեռուստատեսությամբ՝ ՌԴ-ի համանման հեռուստածրագրի օրինակով: Առաջարկեց նաև գիտական մասով սեմինարների իրականացման հարցը քննարկել Հայագիտության 2013-2025 թվականների ռազմավարական ծրագրի շրջանակներում:

5. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նպատակահարմար համարեց <<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանի կողմից առաջարկվող առցանց սեմինարներն իրականացնել վճարովի սկզբունքով և չբավարարվել միայն մագիստրոսների մասնակցությամբ:

Առաջարկեց նաև ԱԷԿ-ի նոր բլոկի և Ջերմային էներգետիկայի վերաբերյալ ներկայացնել վերլուծական եզրակացություն, քանի որ հիդրոէներգետիկայի կողմնակիցներն այլ ռազմավարություն են առաջարկում ԱԷԿ-ի և հիդրոէներգիայի հարաբերակցության մասով, քան այս պահին հաստատված փոքր էներգետիկայի զարգացման ռազմավարությունն է:

6. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել <<Նորավանք>> ԳԿՀ-ի գործադիր տնօրեն Գ. Հարությունյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել ԱԷԿ-ի նոր բլոկի և Ջերմային էներգետիկայի հարաբերակցության մասով վերլուծական եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ